

Մեծ հոգիների դրաման Զովի. Թումանյանի հրապարակախոսության մեջ

Ժողովրդի հոգևոր դեգերումների դրամատիկ պահերին, երբ զորեղանում են են նրան սպառնացող ներքին ու արտաքին մարտահրավերները, հակազդեցության ուժով ասպարեզ են իջնում Մեծ հոգիները: Նրանք տևական լիցքեր են հաղորդում ազգի հարատևման գործընթացին: Զովի. Թումանյանը այդ փաղանգի ամենապայծառ դեմքերից է:

Նրա ապրած ժամանակը քաղաքակրթական տարբեր չափումների յուրօրինակ մի համադրություն էր: Վերջինիս առավել բնորոշ գծերից էր այն, որ ավանդական կացութաձևի կարոտախտը և նորի փնտրտուքը իրենց շփումներում հաճախ փոխբացառում էին միմյանց և դրամատիկ լարվածություն հաղորդում 20-րդ դարասկզբի հայ հասարակության դիմագծին: Նման պայմաններում Թումանյանի ստեղծագործական ներուժը բացահայտվում է երևույթները լայնորեն ընդգրկելու, նրանց հատկանշական կողմերը խորքային առումով մատուցելու կարողությամբ: Այս ասպարեզում ևս նա անզուգական է ու եզակի:

«Մեծ հոգի» հասկացությունը Թումանյանի հրապարակախոսության մեջ շրջանառվում է տարբեր կերպափոխումներով: Իսկ դրաման հոգու գործողութենականությունն է, որ իմաստային և հուզական գործոնների փոխկապակցված շարժումով ի ցույց է դնում կյանքի ամենատարբեր ոլորտներում գրողի որոնումները:

Չկա մի բնագավառ, որ դուրս մնա Թումանյանի հրապարակախոսի տեսադաշտից, եթե այն համազգային մտահոգության շրջանակներ ունի: Ջեկուցման սահմաններում, ելնելով առաջադրված խնդրից, կանգ առնենք առավել կարևորների վրա.

1. Ազգը, հայրենիքը և Մեծ հոգին,
2. Մեծ հոգին հասարակության մեջ, իր միջավայրում,
3. Բարոյականությունը Մեծ հոգու չափումներում,
4. Մեծ հոգին, ստեղծագործությունը և Արարչությունը:

Մինչ հիշյալ ոլորտների քննությանն անցնելը՝ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ ընդհանրական դիտարկումը. հոգու դրաման՝ իբրև երևույթ, և հրապարակախոսությունը՝ իբրև ժանր, իրենց դրսևորման ձևերի մեջ սովորաբար

ուշադրություն են գրավում հակադրությունների ընդգծված բախումներով: Մեր կարծիքով՝ երկու կողմերի, մասնավորապես բարու և չարի, բարոյականի և անբարոյականի, հայրենասերի և ապագայինի, տաղանդի և միջակության ներհակությունները առաջին պլան են մղվում կյանքի գրգիռներին անմիջականորեն արձագանքող հրապարակախոսական երկերում: Սակայն Մեծ հոգու ստեղծագործական մղումներում սրանք, որոշակի դեր խաղալով հանդերձ, հայտնվում են ստվերում, երբ նույն այդ հոգին ինքնօտարվում է անմիջական բախումներից և հաղորդակցվում Արարչին ու նրան մերձ ուղորտներին: Այստեղ արդեն կարևորը Հոգու իմաստուն, լայնախոհ հայացքն է, որը նրան իրավունք է տալիս ասելու.

Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր,

Ես լսում եմ Նըրա անլուռ կանչն ու հունչը ամենուր...

Թունանյանի հրապարակախոսությունն ահա այս առանձնահատկությունն ունի, որը, թվացյալ ժանրային «շեղում» լինելով, մեկ անգամ ևս ի ցույց է դնում նրա ստեղծագործական համակարգի ամբողջականությունն ու միասնությունը:

Իսկ այժմ՝ ավելի կոնկրետ մեր նշած կետերի մասին:

Ազգին և հայրենիքին նվիրված հողվածներում գրողի հոգևոր դրաման բացվում է մի քանի շերտերով: Առաջին իսկ հրապարակումներում նրա մտահոգությունն ուղղված է ազգ-մտավորականություն փոխհարաբերության մեջ վերջինիս սխալ կողմնորոշմանը: Հայ մտավորականը, ըստ Թունանյանի, գործում է «անխելք հայրենասիրությամբ», ժողովրդի կենսական խնդիրները մի կողմ թողած՝ ապրում է սին պատրանքներով: Մյուս կողմից՝ երկրի թշվառ վիճակի գնահատումները նրան մղում են բացահայտելու իր ցեղի գոյության խորհուրդը. «Ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ւր որոնենք էդ ոգին: Արդյո՞ք Սասունի, Ջեթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերո՞ւմ, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիկ կամարների տա՞կ..., թե՞ դալար մարգերում ու խաչահանգիստ հովիտներում...»: Ժողովրդի ամբողջությունն, ըստ Թունանյանի, «էս ամեն տեղերում է, էս ամենի մեջ¹»: Սակայն Մեծ հոգուն տանջող մտորումներն անվերջանալի են, և զարմանալի չէ, որ նա հողվածը եզրափակում է իրեն և ընթերցողին կրկին անորոշության մղող հարցով. «Ո՞րն է հայ ժողովրդի ոգին և ի՞նչ է ուզում նա»:

Ազգի անմխիթար վիճակից բխող դրաման մեկ այլ դեպքում Թունանյանը փորձում է լուծել ազգային խոշոր դեմքերի վաստակի գնահատմամբ: Իբրև առիթ օգտագործելով հայ մեծանուն գրողի, մշակութային գործչի հոբելյանը կամ նրա անվան հետ կապված որևէ միջոցառում՝ Թունանյանը սեղմ և դիպուկ

¹ Հովի. Թունանյան, ԵԼԺ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հտ. 6, Ե., 1994, էջ 194-195:

գնահատականներով արժևորում է նրանց հոգևոր մաքառումները, նվիրումը, առաջադրած գաղափարները, հարաբերակցում դրանք ազգային կյանքի արդի ընթացքին: Ընդ որում գնահատանքի խոսք է ասվում հայոց համարյա բոլոր մեծերի հասցեին՝ Մեսրոպ Մաշտոցից սկսած՝ մինչև իր հանճարեղ ժամանակակիցները: Առանձնակի խորքով բացահայտում է 19-րդ դարի հայ գրողների հոգևոր դրաման, քանզի իր ժամանակահատվածն անմիջական աղերսներ ունի նախորդ դարում սկիզբ առած ազատագրական շարժման հետ: «Խոսք Ռաֆֆու գերեզմանի վրա» հրապարակումը ասվածի լավագույն վկայությունն է: Ռոմանտիկ վիպասանին տված բնութագրումները՝ «անմահ հոգի» և հատկապես՝ «անհանգիստ հոգի», առիթ են դառնում մեկ անգամ ևս գնահատելու ազատագրական պայքարի անցած ճանապարհը: Ու թեև նյութն ավարտվում է լավատեսական հնչերանգով («արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նա հին դժոխքից» և այլն), սակայն խորքում թունանյան-հրապարակախոսի ներքին մտահոգությունն առկա է, և դա նկատելի է նրա ելույթը, խոսքը եզրափակող «ով անհանգիստ հոգի» բառակապակցության մեջ: Իրադարձությունների հետագա ընթացքը (1913 թվականից հետո) ցավոք, հավաստեց, որ այդ անհանգստությունն իզուր չէր...

Մեծ հոգիների դրաման առանձնակի դրսևորումներ է ստանում նաև հասարակության, մասնավորապես գորշ միջավայրի հետ նրանց փոխհարաբերությունների համատեքստում: Ցանկացած, նույնիսկ բարձրաշխարհիկ հասարակություն ունի իր թերացումները: Բայց կան արատներ, որոնք լրջորեն խոչընդոտում են առաջընթացը, մթնոլորտը դարձնում հեղձուցիչ և նույն այդ հասարակությանը կանգնեցնում հոգևոր սնանկացման եզրին: Մեծ հոգիների համար այդ արատներից խոշորագույնը տգիտությունն է, ազգային ինքնաճանաչողության իսպառ բացակայությունը. «Երկիր ունենք-չենք ճանաչում, պատմություն ունենք – չենք ճանաչում, ժողովուրդ ունենք – չենք ճանաչում, գրականություն ունենք – չենք ճանաչում, լեզու ունենք – չենք իմանում²», - գրում է Թունանյանն իր «Մեծ ցավը» հոդվածում: Հոգու դրաման խորանում և զգացական բռնկումների է հասնում հատկապես այն պահերին, երբ նրան դեմ հանդիման կանգնում է տգիտության մեկ այլ երեսը՝ միջակությունը: Վերջինս շատ ավելի վտանգավոր է, քանի որ «դիպվածային» գիտելիքների տեր «գիտունը» իր դատողություններով կարող է ապակողմնորոշել հասարակությանը և փակել տաղանդավոր արվեստագետի ճանապարհը: Նրանց դեմ Թունանյանի գրիչը խիստ է և անողոք, քանի որ Մեծ հոգին այս դեպքում խորապես զգում է իր և իր նմանների գոյությանը սպառնացող վտանգի

² Հովհ. Թունանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 6, էջ 174:

մեծությունը: Թերևս միայն այս դիտանկյունից կարելի է արդարացնել Դրամբյանին իր առաջին պատասխան հոդվածում տված որակումների ծայրահեղությունը, ինչը ժամանակի գրական միջավայրում միանշանակորեն չընդունվեց: Սակայն Թունանյանի համար սա սկզբունքային պայքար էր, պայքար դրամբյանիզմի դեմ, որը որակում է հետևյալ կերպ. «Դուք մի որևէ Դրամբյան չեք: Դուք մինը չեք: Դուք շատ եք: Դուք տիպ եք³...»:

Ուշագրավ է, որ իր բուռն զայրույթն արդարացնելու համար անտիպ հոդվածներից մեկում իրեն մեղադրող Սուշեղ Բագրատունուն գրողը հիշեցնում է Հիսուս Քրիստոսի արարքներից մեկը. «Ձայրացած Հիսուսը Երուսաղեմի տաճարից դուրս տարավ աղավնավաճառներին: -Իմ հոր տաճարն,-ասավ,-ավազակների այր եք դարձրել: Մի՞թե կարծում եք,-շարունակում է Թունանյանը,-նրանց աղավնուց ավելի լավ ապրանք են ձեր բթամտությունն ու կեղծավորությունը, որ գրականության մեջ վաճառում եք ժողովրդին⁴»:

Հասարակություն-արվեստագետ փոխհարաբերություններում հրապարակախոսին խոր ցավ է պատճառում նաև միջավայրի անհոգի վերաբերմունքը, ինչը կարող է ստորացնել արվեստագետին, հարված հասցնել նրա ինքնասիրությանը: Գրողի մահից հետո նրա ապրած «ողորմելի, թշվառ» կյանքի վկայակոչումները, տոնակատարության օրերին հոբելյարի նյութական ծանր վիճակի մատնանշումները՝ փող հավաքելու ակնկալիքով, վրդովեցնող են: Նա, ի վերջո, սովորական մահկանացու չէ, այլ գրող, որի մասին խոսելիս, «պետք է միշտ ի նկատի ունենաք...նրա հոգու հպարտությունը, նրա սրտի քնքշությունը, այլապես կարող եք աղավաղել ու աղճատել այն, որ ամենասուրբն ու ամենանուրբն է նրա մեջ և որ ամենաթանկը պիտի լինի ձեզ համար⁵»:

Մեծ հոգիների դրաման հետաքրքիր և անկեղծ դրսևորումներ է ստանում, երբ վերջիններս, դեպքերի բերումով, հայտնվում են բարոյական հիմնարար արժեքների փլուզման վտանգի առաջ: Թունանյանը բարոյականի կերպափոխումները քննում է ոչ միայն մարդկային, այլև կրոնական դավանանքի, ազգերի փոխհարաբերությունների համատեքստում:

Մարդկայինի ոլորտում Մեծ հոգիների կյանքի դրամատիկ վախճանի հուզական, բայց և խորքային վերլուծություններով են հագեցած կաթողիկոս Մատթեոս Իզմիրյանի և Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից Սիմոն Զավարյանի մահվան առիթով գրված հրապարակումները:

³ Հովի. Թունանյան, Ոչ-գրական ոչնչությունները քննադատ, «Մշակ», 1908, նո. 169, 5 օգոստոսի:

⁴ Հովի. Թունանյան, ԵԼԺ հտ. 6, էջ 437:

⁵ Հովի. Թունանյան, ԵԼԺ, հտ. 6, էջ 311:

Իզմիրյանի մասին գրվել է հինգ, Ջավարյանի մասին՝ երկու հոդված: Սրանց համեմատական քննությունը ուշագրավ ընդհանրություններ է բացահայտում: Նրանք գործել են տարբեր ասպարեզներում. մեկը՝ կրոնական, մյուսը՝ քաղաքական: Դրանով հանդերձ՝ Թումանյանը վեր է հանում երկու գործիչների համար խիստ հատկանշական հետևյալ կողմերը.

ա) Ե՛վ Իզմիրյանին, և՛ Ջավարյանին բնորոշ է «ամենադժարն ու ամենաբարձրը, ինչ-որ կարող է ունենալ մարդ արարածը», այն է՝ ազնվությունը,

բ) Երկուսն էլ իրենց գործի նվիրյալներն էին, որ այրվեցին մինչև վերջ,

գ) Երկու գործիչների «գլխին» էլ ազնվությունն ի վերջո դարձավ պատիժ, քանի որ, ինչպես ցավով նշում է Թումանյանն իր մեկ այլ հոդվածում («Դառնացած ժողովուրդ»). «Ճշմարիտը էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով»⁶:

Մեծ հոգու դրամատիկ ապրումների ու մտորումների փայլուն արտահայտություններից են քրիստոնեության մեծագույն տոնին նվիրված «Ձատկի առիթով», «Մեծ և անմահ» հոդվածները: Երկուսում էլ ակնհայտ է փիլիսոփայական խորքը: Մեծ հոգին, տվյալ դեպքում՝ Հիսուս Քրիստոսը, անմահ է, քանի որ իր մեջ մարմնավորում է խաչելության ոչ թե եզակի, այլ ընդհանրական ու հավերժական պատկերը: Եվ նա դեռ հարություն չի առել մարդկանց սրտերում, քանզի սրանք իրենց երկրային կյանքում ծիսական արարողությունը դարձրել են «արյան (նկատի ունի կենդանի մորթելը - Դ. Պ., որկրամոլության ու շռայլության օր)»⁷:

Նույն դառը մտորումներն են համակում հրապարակախոսին, երբ անդրադառնում է քաղաքակիրթ ազգերի սանձազերծած համաշխարհային պատերազմին: Հուսահատության պահերին հաջորդում է տխուր եզրակացությունը. «Ավա՛ղ, կարծես թե իզուր են ապրում ու անցնում մեծ փիլիսոփաները, մեծ գիտնականներն ու մեծ բանաստեղծները, ազգերի համար մեծ մասամբ նրանք հանդիսանում են լոկ որպես շքեղ զարդարանքներ»⁸:

Սակայն Մեծ հոգիների դրաման խորապես առինքնող է նրանով, որ վերջիններիս հետաքրքրությունների ոլորտում երկրային իրողությունները չեն միայն: Եվ, ինչպես արդեն նշեցինք, նաև այդ իմաստուն հայացքի ընդգրկունությամբ է պայմանավորված Թումանյանի հրապարակախոսությունը: Նմանաբնույթ հրապարակումներում նա ժամանակավորապես մի կողմ է դնում հակադրվողի կեցվածքը. առաջնային են դառնում, նախ, ստեղծագործությունը՝ իբրև աստվածային արարչության կոնկրետ դրսևորում երկրի վրա, և ապա՝ երկնային ոլորտներին

⁶ Հովի. Թումանյան, նույն տեղում, էջ 223:

⁷ Հովի. Թումանյան, ԵԼԺ, հտ. 7, էջ 49:

⁸ Նույն տեղում, էջ 149:

հնարավորինս մերձենալու ձգտումը: Հետաքրքիր է, որ ստեղծագործությունն ասելով՝ նկատի ունի ոչ միայն գրական երկը, այլև մարդուն: Այդպիսին է, ըստ Թումանյանի, Ղազարոս Աղայանը, որը ստեղծագործող անհատականությունն լինելով հանդերձ, «անհամեմատ ավելի բարձր էր որպես ստեղծագործություն: Աստծո հազվադեպ հաջող ու պայծառ ստեղծագործություններից մեկն էր նա⁹» («Տխուր հիշողություն»): Իսկ ստեղծագործելու շնորհքը ինքնին աստվածային ուժի վկայությունն է, «ամենաբարձրը, ինչ որ կարող է աշխարհքում վիճակվել մահկանացուին¹⁰» («Սիրելի Շիրվան»): Կարելի է ենթադրել, որ գրողն այս կերպ ստեղծում է նաև հայ մտավորականի իդեալական կերպարը՝ իբրև մեր ազգային ինքնության հարացույց, բայց սա արդեն այլ խոսակցության թեմա է:

Հաջորդ իրողության՝ երկնային ոլորտներին մերձենալու ձգտումը Թումանյանն իրականացնում է հրապարակախոսական ինքնատիպ ժեստով. հակառակորդին ուղղակիորեն պատասխանելով հանդերձ՝ հատկապես կարևորում է իր ստեղծագործական նկարագրի իմաստավորման խնդիրը. «Ես իմ ողջ էությանը ապրում եմ մարդկային կյանքից ավելի մեծ կյանքով, հենց էնպես, ինձ համար, և անընդունակ եմ մի որևէ վանդակի մեջ փակվելու ու էն տեսակ երգեր երգելու, որ ձեզ դուր գամ¹¹» («Տխուր Գ. Վ.-ին»):

Մեծ հոգիների դրամայի հետ կապված՝ մի վերջին դիտարկում ևս. իր հողվածներում, ելույթներում Թումանյանն անդրադառնում է նաև համաշխարհային գրականության մեծերին՝ Շեքսպիր, Սերվանտես, Գյոթե, Հայնե, Պուշկին, Լերմոնտով, Տոլստոյ... Նրանք, ապրելով տարբեր դարաշրջաններում ու հասարակարգերում, իրենց մեջ կրում են Մեծ հոգիներին բնորոշ դրաման: Այն հավերժական է, քանի որ հասարակությունը, շատ դեպքերում չհանդուրժելով, չի էլ կարող ապրել առանց այդ հոգիների: Թումանյանը խորապես ըմբռնում և գնահատում էր նրանց, ինքն էլ մեկն էր այդ հոգիներից: Եվ սրանում է նաև նրա հրապարակախոսությունը սնող դրամայի առանձնակի ու չխամրող հմայքը:

⁹ Հովի. Թումանյան, ԵԼԺ, հտ. 6, էջ 361:

¹⁰ Նույն տեղում, էջ 336:

¹¹ Նույն տեղում, էջ 190:

